ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՆՎԻՐՎԱԾ

Սովետական Հայաստանի անտեսական ու կուլտուրական կյանքի պատմության մեջ մեծ երախտիք ունի ՀԿԿ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանը: Նա այդ պատասխանատու պոստում 17 տարի կուսակցական ու պետական մեծ գործունեություն է ծավալել հանուն հայ ժողովրդի բարգավաճման, հանուն նոր կյանքի կառուցման:

Գ. Հարությունյանը ծնվել է 1900 թ. նոյեմբերի 7-ին, Թիֆլիսի նահանգի Թելավ քաղաքում, այգեգործի ընտանիքում:

Գրիգորը՝ ընտանիքի 5 զավակներից ամենակրտսերն, ամբողջովին կլանված էր ուսման, դպրոցի ու այլ հասարակական աշխատանքներով: Նրա ավագ եղբայրները հորն օգնում էին այգու մշակման և առևտրական գործերում, իսկ Գրիգորի տարերքը ուսումը և հասարակական կյանքի խնդիրներն էին:

1908—1910 թթ. Գր. Հարությունյանը սովորել է Թելավի քաղաքային ուսումնարանում, որը չավարտած՝ 1911 թ. ընդունվում է տեղի արական գիմնազիան և ավարտում 1920 թ.:

Դեռևս աշակերտական տարիներին նա տարվում է հեղափոխական գործունեությամբ, մասնակցում անլեգալ մարքսիստական երիտասարդական խմբակների աշխատանքներին:

1918—1919 թթ. բարձր դասարանների աշակերտների մեջ մարքսիստական գաղափարների տարածման գործում ակտիվ աշխատանք էր տանում գիմնազիայի բոլշևիկ ուսուցիչ Արտուր Ռուդոլֆովիչ Սիումյագինը, որի նախաձեռնությամբ կազմակերպվել էր անլեգալ կոմերիտական բջիջ: Նրա հանձնարարությամբ Գր. Հարությունյանը իր ընկերներով անլեգալ գրականություն և բոլշևիկյան թերթեր էր տարածում Թելավում և շրջակա գյուղերում: Գր. Հարությունյանը միաժամանակ բոլշևիկյան անլեգալ այն բյուրոյի անդամ էր, որի կազմի մեջ էին մտնում Սամսոն Ցինցաբաձեն, Գեորգի Ջիտալաձեն, Օլգա Դեուրկովան, Նիկո Բետանիշվիլին, Գիգո Կուրցիկաշվիլին և ուրիշներ:

1919 թ. վերջերին, երբ մենշևիկյան կառավարությանը հայանի դարձավ Ա. Սիումյագինի գործունեության մասին, նա, հետապնդումներից խուսափելու համար ստիպված էր հրաժեշտ տալ իր սիրելի աշակերտներին ու հեռանալ Թելավից: Նրա ամենասիրելի աշակերտը, կոմերիտական բջջի ոգին Գրիշան էր՝ Գր. Հարությունյանը, որին և հանձնեց անլեգալ կազմակերպության ղեկավարությունը: Թելավի անլեգալ բոլշևիկյան կազմակերպության անդամ (այժմ՝ անհատական թոշակառու) Օլգա Եգորովնա Դեուրկովան իր հուշերում պատմում է՝ Գր. Հարությունյանը, որ «տաղանդավոր կազմակերպիչ էր, շուտով իր շուրջը համախմբեց առաջադեմ մտածողությամբ երիտասարդությանը և լայն թափ հաղորդեց խմբակային աշխատանքներին»: Այդ գործում նրա անբաժան ընկերն ու օգնականը Ժորա (Գեորգի) Թարուլովն էր: Նրանց ազդեցությունը բավական մեծ էր երիտասարդության շրջանում, և դրա շնորհիվ մենշևիկյան ագիտատորները երիտասարդությանն իրենց կողմը գրավելու ագիտացիայում ոչ

մի հաջողության չէին հասնում: Գր. Հարությունյանը Թելավում «Սպարտակ» կազմակերպության հիմնադիրներից էր, երիտասարդության շրջանում սիրված, կազմակերպական մեծ ունակություններով օժտված գործիչ:

1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. փետրվարը Գ. Հարությունյանը աշխատել է որպես Թելավի ընդհատակյա բոլշևիկյան գավառային բյուրոյի կուսկազմակերպիչ և ագիտատոր: Հեղափոխական ակտիվ գործունեության համար նա 1920 թ. մենշևիկյան կառավարության կողմից ձերբակալվում և բանտ է նետվում: Բանտում ևս Գր. Հարությունյանը ստեղծում է իր համախոհների խումբը և շարունակում ընդհատակյա հեղափոխական աշխատանքը:

Վաստակավոր հեղափոխական Ն. Ս. Գոդզիևը 1920 թ. դեպքերի բերումով մենշևիկյան բանտ էր նետվել և տեղավորվել «Բոլշևիկյան կամերայում»: Այստեղ նա ծանոթանում է Թելավի ականավոր բոլշևիկներ Սամսոն Ցինցարաձեի (հետագայում՝ Թելավի հեղկոմի առաջին նախագահը), Պատաշվիլու, Կուրցիկաշվիլու և Գր. Հարությունյանի հետ: Բանտարկյալների մեջ,—գրում է իր հուշերում Ն. Ս. Գոդզիևը,—Գր. Հարությունյանը «ամենաերիտասարդն էր, Թելավի բոլշևիկյան կազմակերպության լրջախոհ և քաղաքական լայն մտահորիզոնով օժտված ընդհատակյա գործիչը»: Չնայած իր երիտասարդ տարիքին, Գր. Հարությունյանը հանդես էր գալիս որպես շրջանայաց խորհրդատու և օգնության էր հասնում բոլորին: Նա բարոյալքվողներին հույս էր ներշնչում, կարիքավորներին նյութական օգնություն էր ցույց տալիս և հավատացնում, որ մոտ ապագայում Հոկտեմբերի դրոշը կծածանվի նաև Անդրկովկասում:

Շուտով լուր ստացվեց, որ կարմիր բանակի զորամասերը մտել են Վրաստանի սահմանը: Մենշևիկյան կառավարությունը, գլուխը կորցրած, սկսում է փախուստի դիմել: Երիտասարդությունը բնակչության աջակցությամբ ջարդում է բանտերի դռները, բոլշևիկյան գործիչներին ու նրանց համակրողներին ազատ արձակում:

Վրաստանում սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ 1921 թ. փետրվարին բանտից ազատվում է նաև Գր. Հարությունյանը: Այդ ժամանակից սկսած՝ երիտասարդ հեղափոխականի համար նոր, բաղձալի հասարակարգ ստեղծելու գործին նպաստող լայն ասպարեզ է բացվում: Աշխատանքի անցնելով Վրաստանի Կ(բ)Կ Թելավի գավառային կոմիտեում՝ որպես ագիտացիայի բաժնի վարիչ, շուտով նա աչքի է ընկնում որպես կուսակցական հմուտ աշխատող և ընտրվում գավառային կոմիտեի պատասխանատու քարտուղար: Այս պաշտոնում Գր. Հարությունյանը մեծ ժողովրդականություն է վայելում: Մինչև այսօր էլ թելավցիները նրա մասին խոսելիս երախտագիտությամբ ասում են. «Այո՛, շատ լավ ենք հիշում մեր Գրիշային»: Թելավում 20-ական թվականներին նրան բոլորն էլ՝ վրացիները, հայերը և մյուս ազգերը, «Մեր 'Գրիշա» անվանումն էին տալիս: Կարճ ժամանակում Թելավի կազմակերպությունը լուրջ հաջողությունների հասավ, դարձավ հանրապետությունում առաջավորներից մեկը:

Այդ ժամանակ էլ Գր. Հարությունյանը ծանոթացավ Նինա Գեուրկովայի հետ և հանձին նրան գտավ իր անզուգական, նվիրված ու խելացի կյանքի ընկերոջը:

Անհատական թոշակառու, թելավցի Դավիթ Ռևազովը պատմում է, որ 1922 թ. Թելավի շրջանում բանդիտիզմի դեմ պայքարելու համար բոլշևիկ Մամիա Էրիստավիի (հետո զոհվեց բանդիտների դեմ կռվելիս) հրամանատարու-

թյամբ ստեղծվեց հատուկ զորախումբ: Նրա կազմի մեջ էին մտնում քաղաքի և շրջանի կոմունիստներն ու կոմերիտականները, որոնք մեծ եռանդով ռազմական պատրաստություն էին ստանում: Դր. Հարությունյանը, լինելով գավառային կոմիտեի քարտուղարը, ոչ մի պարապմունք բաց չէր թողնում և ռազմական գործին տիրապետելու աշխատանքում ևս օրինակ էր ծառայում:

1922 թ. Թելավի գավառային կուսակցական II կոնֆերանսը հանրագումարի բերելով ձեռք բերած նվաճումները, Դր. Հարությունյանին ընտրեց Վրաստանի կոմկուսի առաջին համագումարի պատգամավոր: Այդ նույն տարում նա ընտրվում է նաև Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարի պատգամավոր: Ամենուր Դր. Հարությունյանը հանդես էր գալիս որպես եռանդուն ու բանիմաց կուսակցական գործիչ:

Նորաստեղծ սովետական կարգերի ամրապնդման գործում կարևոր նշանակություն տալով կարմիր բանակին, կուսակցությունը Դր. Հարությունյանին 1922 թ. հունիսից ուղարկում է կարմիր բանակի վրացական դիվիզիայի քաղբաժին՝ պատասխանատու աշխատանքի: Կարճ ժամանակում նա աչքի է ընկնում իր ընդունակություններով: Սակայն Դր. Հարությունյանը ձգտում էր հարստացնել իր տեսական պատրաստականությունը: Ընդառաջելով նրա ցանկությանը՝ 1922 թ. սեպտեմբերին Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմը նրան գործուղում է Մոսկվայի Կ. Մարքսի անվան ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետում սովորելու: Ուսման բնագավառում և ինստիտուտի կուսակցական ու հասարակական կյանքում Դր. Հարությունյանը աչքի էր ընկնում որպես եռանդուն ու նվիրված կոմունիստ, որպես հոգատար ու սրտացավ ընկեր: Այդ այն շրջանն էր, երբ ղեկավար ու հմուտ կադրերի մեծ պակաս էր զգացվում: Երբ Դր. Հարությունյանը պատրաստվում էր ավարտական քննություններին, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմը 1924 թ. հունիսին նրան ետ է կանչում և կրկին ուղարկում կուսակցական պատասխանատու աշխատանքի: Նա ընտրվում է Ավանչալայի կուսշրջկոմի պատասխանատու քարտուղար: Միաժամանակ նա ընտրվեց «Զագէսի» շինարարության կուսկազմակերպության քարտուղար: Այդտեղ 3 հազարանոց բազմազգ բանվորական կոլեկտիվ էր աշխատում: Անդրկովկասի համար այդ խոշոր հիդրոէլեկտրակայանի կառուցման գործում իր լուման մտցրեց Դր. Հարությունյանը: Նա կազմակերպական և քաղաքական աշխատանք ծավալեց և իր եռանդն ու ունակությունները ներդրեց այդ կարևոր կառույցի՝ Անդրկովկասի այն ժամանակվա հսկայի շինարարությունը ժամանակին ավարտելու գործում: Սակայն Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմն ընդառաջելով թելավցիների պահանջներին, Դր. Հարությունյանին ուղարկում է Թելավ, որտեղ նա 1925 թ. մայիսից մինչև 1927 թ. դեկտեմբերը աշխատում է գավառային կուսակցական կոմիտեի պատասխանատու քարտուղարի պաշտոնում: Այդ տարիներին Թելավի գավառում նրա կատարած աշխատանքը երախտագիտության մեծ զգացումով են հիշում կուսակցության վետերանները ու հասարակությունը:

1924—1928 թթ. Թելավի գավառային լուսաբաժնի վարիչ (այժմ՝ անհատական թոշակառու) Դ. Օ. Մելիտաուրին իր հուշերում գրում է, որ Դր. Հարությունյանը «մարդկանց նկատմամբ ունեցած իր հմայքով, ուշադրությամբ ու հոգատարությամբ վայելում էր բոլորի սերն ու համակրանքը»:

Նա պատմում է հատկապես այն մասին, թե Դր. Հարությունյանը ինչպիսի հոգատարությամբ էր վերաբերվում դպրոցական ցանցի ընդլայնման նկատ-

մամբ, լուսավորության ու կուլտուրական հեղափոխության խնդիրները լուծելիս: Դր. Հարությունյանի աջակցությամբ դպրոցներ բացվեցին Լեռնային Դուշեթի շրջանում, հատկապես ծովադուշեթցիների ամառանոցում, իսկ Օմսալո գյուղում բացվեց դպրոց-ինտերնատ: Մինչ այդ մոտ 3000 լեռնաբնիկներ զրկված էին ուսումնառության հնարավորությունից: Թելավում նրա ջանքերով ստեղծվեց հայրենագիտական թանգարան, որի բացումը տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի օրը:

Գր. Հարությունյանը (կենտրոնում) Թելավի մի խումբ շինարարների և դեկավար աշխատողների հետ (1926 թ.):

Թելավի գավառի տնտեսական ու կուլտուրական շինարարության գործում շատ մեծ ներդրում ունի Գր. Հարությունյանը:

Այդ տարիներին Գր. Հարությունյանը ընտրվել է Վրաստանի կոմկուսի IV և V համագումարների պատգամավոր և Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի անդամության թեկնածու: Իր լավագույն աշխատանքի համար 1928 թ. Գր. Հարությունյանը առաջ է քաշվում որպես Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի՝ գյուղում տարվող աշխատանքների բաժնի վարիչ, իսկ հետո՝ 1930 թ. հունվարի 24-ին նշանակվում է Վրաստանի կոլխոզկենտրոնի նախագահ և ապա (1931 թ.) աշխատում է Վրաստանի Կ(բ)Կ ԿՎՀ ու բանգյուղտեսչության նախագահի տեղակալի պաստում: Ամենուր նա աշխատում է պարտքի բարձր զգացումով ու պատասխանատվությամբ: 1930 թ. Գր. Հարությունյանը Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների VI համագումարի պատգամավոր էր:

1931—1934 թթ. Գր. Հարությունյանը նորից աշխատանքի է անցնում ՀԿ(բ)Կ Կենտկոմում, սկզբում որպես կազմակերպչական, իսկ հետո՝ կազմահրահանգչական բաժնի վարիչ: Այդ տարիներին նա Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության անդամ էր: Գր. Հարությունյանը ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի անդամ էր և Անդրերկրկոմի նախագահության անդամության թեկնածու:

1931—1933 թթ. Գր. Հարությունյանը ընտրվել է Վրաստանի ԿԿ Կենտկոմի կուսհրատի խմբագրական կոլեգիայի անդամ, «Բոլշևիկ», «Ագիտատոր», «Կոմունիստական հեղափոխություն» ամսագրերի խմբագրությունների անդամ, «Պարտստրոիտելստվո» ամսագրի խմբագիր և այլն: Նա ակտիվ աշխատանք է տարել նաև մի շարք կարևոր հանձնաժողովներում, հատկապես Շոթա Ռուսթավելու հոբելյանական հանձնաժողովում, Վրացական ՍՍՀ նոր սահմանադրության մշակման խմբագրական կոլեգիայի անդամի պարտականությունները կատարելիս և այլն:

1934—1937 թթ. Թբիլիսիի քաղաքային կոմիտեի պատասխանատու քարտուղարի պաշտոնում ավելի լայն չափով են հանդես գալիս Գր. Հարությունյանի կազմակերպական և շինարարական ունակությունները: Թբիլիսցիները այսօր էլ ջերմությամբ են հիշում նրա ավանդը քաղաքի վերաշինության, բազմաթիվ նոր արդյունաբերական ու այլ խոշոր ձեռնարկությունների շինարարության, քաղաքի կանաչապատման, նոր թաղամասերի ստեղծման ու բարեկարգման բնագավառում:

Նա պահանջկոտ էր կառավարության ու կուսակցության առաջադրանքները անթերի կատարելու գործում: Մարդկանց նկատմամբ հոգատար, գործուն և բանիմաց, մարդկանց աշխատանքը կարողանում էր նկատել և բարձր գնահատել: Ինքը ևս գործի մարդ էր, տարված էր աշխատանքով, շատ համեստ կյանք էր վարում:

Այդ ժամանակ նա արդեն լայն ճանաչում գտած և մեծ հեղինակություն վայելող կուսակցական ու պետական գործիչ էր: Գր. Հարությունյանը Վրաստանի Կ(բ)Կ ԿԿ-ի բյուրոյի անդամ էր և աշխատում էր նվիրվածությամբ: Այդ էր պատճառը, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը 1937 թ. Գր. Հարությունյանին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի երաշխավորությամբ ընտրում է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի առաջին քարտուղար: Այդ պատասխանատու պաստում նա մնում է մինչև 1953 թ. նոյեմբերը: 1939 թ. Գր. Հարությունյանը կուսակցության XVII համագումարում ընտրվում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամության թեկնածու, իսկ XIX համագումարում, 1952 թ. ընտրվում է Կենտկոմի անդամ: Նա ՍՍՀՄ Գերագույն սովետի I, II և III նստաշրջանների ընտրություններին դեպուտատ է ընտրվում: 1927—1937 թթ. Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի անդամ էր, իսկ 1937—1953 թթ. ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ: 1939—1946 թթ. Գր. Հարությունյանը Անդրկովկասյան ռազմական օկրուգի, ապա նաև կովկասյան ճակատի ռազմական խորհրդի անդամ էր: Սովետական Հայաստանի տնտեսական շինարարության, սոցիալիստական կյանքի հաստատման, Հայրենական պատերազմի ծանր տարիներին, հետպատերազմյան վերականգնման ու տնտեսության վերակառուցման ժամանակաշրջանում իր եռուն աշխատանքի 17 տարիների ընթացքում նա, ամբողջովին կլանված հայրենանվեր աշխատանքով՝ իր ողջ եռանդն ու ունակությունները ավեց սոցիալիստական շինարարությանը, Սովետական Հայաստանի բարգավաճմանը:

Գր. Հարությունյանը շրջահայաց և խորիմաստ կուսակցական ու պետական գործիչ էր: Հատկապես մեծ է նրա դերը Երևանի, Կիրովականի և այլ քաղաքների շինարարության, արդյունաբերության, հայ ճարտարապետության, գիտության ու կուլտուրայի զարգացման գործում: Երևան քաղաքի ճարտարապետական ձևավորման ու պլանավորման մեջ կարևոր դեր են կատարել նրա մտահղացումներն ու բանիմաց խորհուրդները, որոնց իրականացման գործում եռանդ ու աշխատանք չէր խնայում Երևանի քաղսովետի նախկին նախագահ երախտաշատ Եղիշե Վարդանյանը և նրա նման շատ ուրիշները:

Գր. Հարությունյանի նախաձեռնությամբ 1943 թ. պատերազմի ծանր օրերին, հիմք դրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիային և բազմաթիվ այլ գիտական ու ուսումնական հաստատությունների: Նա իր պետական գործչի տաղանդով և ունակություններով մեծ չափով նպաստել է Սովետական Հայաստանի վերածննդին: Իր կյանքի վերջին տարիներին՝ 1953—1956 թթ. Գր. Հարությունյանը աշխատում էր որպես Էջմիածնի շրջանի Ջանգիբասարի բանջարաբուծական սովխոզի դիրեկտոր: Այդտեղ ևս նա վայելում էր բանվորների և բոլոր աշխատողների սերն ու համակրանքը: Կարճ ժամանակում, ամայի տարածության վրա նա ստեղծեց բարեկարգ և օրինակելի տնտեսություն: 1956 թ. դեկտեմբերի 10-ից նա աշխատանքի է անցնում Վրացական ՍՍՀ Մինիստրների սովետի Պետպլանում՝ միութենական-հանրապետական արդյունաբերության բաժնի պետի տեղակալի պաշտոնով:

1957 թ. սկզբից Գր. Հարությունյանի առողջությունը վատանում է: Նրա աշխատանքի ընկերները մեծ հոգատարություն էին ցույց տալիս: Սակայն նա այլևս ի վիճակի չլինելով աշխատել, խնդրում է իրեն ազատել աշխատանքից: 1957 թ. ապրիլի 27-ին, իր դիմումի համաձայն, Գր. Հարությունյանն ազատվում է աշխատանքից: Նա ապրիլ 24-ին գրած դիմումում նշում էր, որ հիվանդանոցում հատուկ բուժումից հետո էլ իր առողջությունը վատացել է և «բժիշկների եզրակացության համաձայն պահանջվում է սրտանոթային համակարգի երկարատև բուժում: Այդ կապակցությամբ խնդրում եմ Ձեզ,— դիմում է նա Պետպլանի նախագահ Գ. Ա. Ջաբուային,—ազատել ինձ աշխատանքից...»:

1957 թ. նոյեմբերի 9-ին Թբիլիսիում վախճանվեց Գր. Հարությունյանը: Եղբայրական Վրաստանի հասարակայնությունը մեծ հանդիսավորությամբ կազմակերպեց նրա թաղումը: Թաղմանը մասնակցեցին նաև Հայաստանի աշխատավորության ներկայացուցիչները, նրա հիմնադրած սովխոզի գործընկերները:

Գր. Հարությունյանը երիտասարդ հասակից նվիրվելով կոմունիստական կուսակցության գործին, Լենինի վեհ գաղափարներին, մինչև իր կյանքի վերջը չնայած անհատի պաշտամունքի շրջանին հատուկ որոշ թերություններին, ազնվորեն կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ: Կուսակցությունն ու կառավարությունը բարձր գնահատելով Գր. Հարությունյանի ծառայությունները, նրան չորս անգամ պարգևատրեցին Լենինի, ինչպես նաև Աշխատանքային կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով և մի շարք մեդալներով:

Սովետական Հայաստանի վերածննդի ու բարգավաճման կոթողներում, արդյունաբերության բուռն զարգացման երթում, կուլտուրայի ու գիտության ձեռք բերած նվաճումներում այսօր էլ տեսնում ենք Գր. Հարությունյանի շուրջ

տասնյոթ տարիների ներդրումը: Նա կանգնած է եղել այդ հաղթանակների ակունքներում, եռանդ ու աշխատանք չի խնայել դրանց հաջողության համար: Իսկ երախտապարտ հայ ժողովուրդը և փառապանծ կոմունիստական կուսակցությունը հարգանքի տուրքն են տալիս լենինյան մեծ գործին նվիրված իր գավակին:

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐ

Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության Սովետական կոմիտեի և ՍՍՀՄ ԳԱ նախաձեռնությամբ 1971 թ. օգոստոսի 23—23 Ֆրունզեում կայացավ միջազգային սեմինար «Ագրարային վերափոխումները Միջին Ասիայի և Ղազախստանի հանրապետություններում և նրանց նշանակությունը աղատագրված երկրների համար» թեմայով։

Սեմինարին մասնակցում էին Մոսկվայի, Միջին Ասիայի, Ղազախստանի, Հայաստանի և սովետական մյուս հանրապետությունների տասնյակ գիտնականներ, ինչպես նաև սոցիալիստական որոշ երկրների և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրների մի խումբ ներկայացուցիչներ։

Քննարկվեցին այն հարցերը, թե ինչպիսի պայմաններում և ինչպես են իրագործվել սոցիալիստական ագրարային վերափոխումները, և ինչպիսի բարձր նվաճումներ են ձեռք բերվել Միջին Ասիայի և Ղազախստանի հանրապետություններում, գյուղատնտեսության բնագավառում։

Պլենար նիստում սովետական Արևելքի հանրապետությունները որպես լենինյան ուսմունքի կենդանի մարմնացում թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Կիրգիզիայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Տ. Ու. Ուսուբալիևը: Սեմինարի նիստերում հանդամանորեն քննարկվեցին հիմնական զեկուցումից բխող հետևյալ երեք հանգուցային հարցերը.

1 Ագրարային վերափոխումների սոցիալ-տնտեսական նախադրյալները և պատմական պայմանները։ 2 Դաղութատիրության և ֆեոդալիզմի մնացորդների վերացումը հողատիրության մեջ։ 3 Ագրարային վերափոխումների սոցիալ-տնտեսական արդյունքները։ Գյուղատնտեսական արտադրության վերելքի ուղիները և մեթոդները։

Հետաքրքիր զեկուցումներով և հաղորդումներով հանդես եկան Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների գիտնականները և ագրարային ռեֆորմների պրակտիկ գործիչները։

Սեմինարում լսվեց և քննարկվեց ավելի քան 80 զեկուցում և հաղորդում։ Սեմինարում Սովետական Հայաստանի ագրարային վերափոխումների հարցերի վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատակիցներ Վ. Ն. Ղազախեցյանը և Գ. Մ. Գեղամյանը:

Սովետական Արևելքի ագրարային վերափոխումների փորձը, որի մասին մանրամասն խոսվեց Ֆրունզեի միջազգային սեմինարում, կարևոր նշանակություն ունի Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող ազգերի համար։